



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ
ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ

ԸՆԶԵՌԱԾ ՆՆԱՐԱԿՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Պաշտպանում է արտահանողներին օտարերկրյա գնորդների չվճարման ռիսկից
- Ստեղծում է առանց գրավի պայմանի առևտրի ֆինանսավորման ծառայություններին հասանելիություն՝ օրինակ ֆակտորինգ
- Նպաստում է վաճառքների ծավալների և դեպի նոր շուկաներ միջազգային առևտրի ավելացմանը՝ գնորդներին հետաձգված վճարումների հնարավորություն տալու միջոցով
- Ստեղծում է վստահության միջավայր՝ նոր գնորդների հետ աշխատելու դեպքում

ԷԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

- Ապահովագրության ժամկետ՝ մինչև **2** տարի
- Ապահովագրական սակագին՝ **0.11%-2.66%***
- Սպասման ժամանակահատված՝ **1-6** ամիս
- Հատուցվող գումար՝ **75%-95%***

ԱՊԱՀՈՎԱԳՐՎՈՂ ՌԻՍԿԵՐ

Առևտրային ռիսկեր

- Օտարերկրյա գնորդի սնանկություն (անվճարունակություն)
- Օտարերկրյա գնորդի հրաժարում վճարում կատարելուց առանց որևէ իրավական հիմքի


Քաղաքական ռիսկեր

- Վարչական որոշումներ, իրավական ակտեր, որոնք հանգեցրել են վճարման կամ արժույթի փոխարկման անհնարինության
- Քաղաքական իրադարձություններ և բնական աղետներ, որոնք հանգեցրել են վճարման սահմանափակումների կամ անհնարինության

* Տվյալները որոշվում են հիմք ընդունելով արտահանողի և օտարերկրյա գնորդի ֆինանսական վիճակը, արտահանողի և օտարերկրյա գնորդի համագործակցության պատմությունը, օտարերկրյա գնորդի երկրի ռիսկայնության դասը և այլն:

ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Օգտվելով ՀԱԱԳ-ի կողմից տրամադրվող արտահանման վարկի ապահովագրությունից՝ ՀՀ արտահանող կազմակերպությունները կարող են ավելի վստահ լինել օտարերկրյա գնորդների հետ գործարքներ կնքելիս՝ առաջարկելով հետաձգված վճարման մրցունակ պայմաններ և պաշտպանված լինելով գնորդների չվճարման ռիսկերից:



Ապահովագրության դիմումը և անհրաժեշտ փաստաթղթերը ստանալուց հետո ՀԱԱԳ մասնագետները իրականացնում են գնորդ կազմակերպության վերլուծություն: Արդյունքում, յուրաքանչյուր գնորդի գծով տրամադրվում է սահմանաչափ, որի շրջանակներում արտահանողը կարող է իրականացնել ապահովագրված մատակարարումներ և որի հիման վրա ՀԱԱԳ և արտահանող կազմակերպության միջև կնքվում են ապահովագրության պայմանագրեր:

Գնորդի կողմից վճարում չստանալու դեպքում ՀԱԱԳ-ը արտահանող կազմակերպությանը վճարում է ապահովագրական հատուցում՝ պայմանագրերով սահմանված կարգով:

ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Օգտագործելով ապահովագրության պայմանագիրը՝ արտահանողները հնարավորություն են ստանում առավել բարենպաստ պայմաններով օգտվել բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից տրամադրվող շրջանառու կապիտալի ֆինանսավորման պրոդուկտներից՝ առանց գրավի պարտադիր պայմանի:

ԱՌԵՎՏՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՌՎԿԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Ֆինանսավորումը կարող է տրամադրվել ինչպես արտահանման պայմանագրի, այնպես էլ այլ արժույթներով՝ հնարավորություն ընձեռնելով չեզոքացնել փոխարժեքի տատանումներից կորուստները
- Շրջանառու կապիտալի համալրում արտահանումից անմիջապես հետո
- Դրամական հոսքերի արդյունավետ կառավարում

ԳՈՐԾԸՆԿԵՐ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐ

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ
ARARAT BANK



ARM SWISS BANK
PRIVATE & INVESTMENT BANKING

ConverseBank

AMERIABANK

ARARATBANK

ACBA-CREDIT AGRICOLE BANK

evocaBANK



ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ


ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Հայաստանի արտահանման ապահովագրական գործակալություն» ԱՓԲԸ-ը հիմնադրվել է ՀՀ Կառավարության որոշմամբ 2013 թվականին՝ արտահանման խթանման նպատակով: Ընկերության միակ բաժնետերերը Հայաստանի Հանրապետությունն է:


ՀԱԱԳ-ի կողմից ստանձնած ապահովագրական ռիսկերի **90%**-ը վերաապահովագրված է հեղինակավոր **Swiss Reinsurance Company Ltd.** կազմակերպության կողմից, որն արժանացել է Standard & Poor's AA- և Moody's Aa3 վարկանիշների:

ՀԱԱԳ ԳՈՐԾՈՒՆԵՐՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԳՐԱՆՑՎԱԾ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ


Կնքված պայմանագրերի քանակ



Ապահովագրական գումար




Հաստատված ապահովագրական սահմանաչափեր



2017թ.-ին ՀԱԱԳ-ի կողմից տրամադրված ապահովագրական հատուցումը կազմում է շուրջ 240 մլն ՀՀ դրամ

Ապահովագրական պատահար շահամարվող դեպքերը կամ ռիսկերը, ապահովագրական հատուցում ստանալու կարգը և գործընթացը, ապահովագրի կողմից ապահովագրվածարը չվճարելու հետևանքները, ապահովագրի իրավունքները և պարտավորությունները, ապահովագրության պայմանագիր կնքելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը, ապահովագրության պայմանագրի վերակնքման, վերաձևակերպման կարգն ու պայմանները, ապահովագրության պայմանագրի վաղաժամկետ դադարեցման և լուծման դեպքերն ու պայմանները նկարագրված են ՀԱԱԳ ԱՓԲԸ պաշտոնական վեբ կայքում՝ www.eia.am



ԱՐՏԱՆԱՆՄԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ, ք. Երևան, 0010, Նալբանդյան 48/1
«Սախարով» բիզնես կենտրոն, 3-րդ հարկ
ՀՀ ԿԲ լիցենսիա ԱՊՈ 0011

Հեռ.՝ +374 10 58 29 29
+374 11 58 29 29



info@eia.am | www.eia.am